ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԻՆՏԵՐՆԵՏՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 11. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին իրականացվող անհատական ծանուցումը ինտերնետի միջոցով

1. **Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից** Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի անհատական ծանուցումն իրականացվում է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված էլեկտրոնային ծանուցման եղանակով:

2. Իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը համարվում է պատշաճ ծանուցված Հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջում տրամադրման ենթակա տեղեկատվությունը տեղադրելու օրվանից 3 աշխատանքային օր հետո, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, որը հավաստվում է էլեկտրոնային համակարգի կողմից: Տեղեկատվության տեղադրման մասին տվյալ իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը տեղեկացվում է հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի «Անձնական գրասենյակ» բաժնում լրացված էլեկտրոնային փոստի հասցեով: Անձը համարվում է պատշաճ ծանուցված սույն մասով սահմանված կարգով՝ անկախ սույն մասի երկրորդ նախադասությամբ նախատեսված տեղեկացումից:

3. **Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից** Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի անհատական ծանուցման նպատակով տրամադրման ենթակա տեղեկատվությունը հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգում տեղադրելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»: